## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«03» 08 2021թ.

# ՀՐԱՄԱՆ N 408-Հ

«ԼՅՈՒՖԹՀԱՆԶԱ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» ավիաընկերության 2021 թվականի հուլիսի 19-ի հայտը և 2021 թվականի հուլիսի 21-ի գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով՝ 2021 թվականի օգոստոսի 12-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 29-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածում՝ 2021 թվականի օգոստոսի 12-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 29-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ ուղղությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և հետևաբար սույն կետում նշված ուղղությամբ մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «զ» ենթակետով սահմանված արտոնությունը:

3. Սույն հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնության սկիզբ սահմանել 2021 թվականի օգոստոսի 12-ը՝ ամիսների նվազման կարգով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 22-ի թիվ 372-Ա հրամանով «Կոնդոր Էյրլայնզ» ՍՊ ընկերության Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով սահմանված արտոնության սկիզբ սահմանվել է 2021 թվականի հուլիսի 30-ը՝ 36 ամսով:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

8/3/2021

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 116/2021
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 116/2021
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ»<br>«Lufthansa German Airlines» |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A319-112, A319-114 |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 3 չվերթ<br>3 flights per week |
| Երթուղին<br>Air route | Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/<br>Frankfurt/EDDF/-Yerevan/UDYZ/-Frankfurt/EDDF/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 12/08/2021 մինչև 29/10/2021<br>12/08/2021 till 29/10/2021 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION
COMMITTEE
TATEVIK REVAZYAN

Recoverable Signature

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

03.08.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)